ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 71

«19» 09 2022 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահե Պետիկի Հարությունյանին Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնից ազատելու և վերջինիս պարտականությունների կատարումը Գուրգեն Համոյի Հակոբյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2022 թվականի սեպտեմբերի 16-ի՝ համապատասխանաբար N 333-Ա և N 335-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Կատարել Վահե Հարությունյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Գուրգեն Հակոբյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Բաղդասարյան Գևորգ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Աղաբեկյան Կարեն - Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ,

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,

Ղահրամանյան Մարուշ - Հայաստանի Հանրապետության

դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,

Նազարեթյան Արմինե - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ,

Գևորգյան Թամարա - Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,

Հարությունյան Աստղիկ - Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության տարածքային վարչության պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2021 թվականի սեպտեմբերի 27-ը:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ